
ԿՐԹԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՐՄԵՆ ԾՈՒՂՈՒՐՅԱՆ, ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կրթական ծառայությունների ոլորտը իր ուրույն տեղն ունի ազգային տնտեսության համակարգում, քանի որ այն ձևավորում է մարդկային կապիտալ և դրանով իսկ վճռորոշ դեր կատարում սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման գործընթացում: Մարդկային կապիտալի առկայությունը սոսկ աշխատուժի ֆիզիկական վերարտադրության հետևանք չէ, այլ կրթության ճանապարհով հասարակության անդամներին մտավոր հնարավորությունների և աշխատանքային լրացուցիչ հմտությունների տրամադրման արդյունք է, որն էապես ազդում է ազգային եկամտի ձևավորման և բաշխման, տնտեսական աճի տեմպերի, հասարակական արտադրության և սպառման համամասնությունների վրա:

Մասնագիտական կրթության ծառայությունների ոլորտը ազգային տնտեսության ամբողջական օրգանիզմում առանձնանում է մի շարք առումներով: Նախ, ի տարբերություն արտադրական գործունեության ավանդական արդյունքների (արտադրության միջոցներ, սպառման առարկաներ), բավականին բարդ է մարդկային կապիտալի տնտեսագիտական չափումն ու արժևորումը: Դրանով իսկ բարդանում է կրթական ծառայությունների մակրոտնտեսական արդյունավետության գնահատումը: Եվ վերջապես, մասնագիտական կրթություն ստացած անհատը երկակի ազդեցություն է գործում տնտեսական հարաբերությունների զարգացման վրա: Մի կողմից նա հանդես է գալիս որպես հասարակական բարիքներ սպառող, մյուս կողմից՝ որոշիչ դեր կատարում այդ բարիքների արտադրության համար անհրաժեշտ կապիտալի ձևավորման գործընթացում (ֆիզիկական և մարդկային կապիտալ)¹:

Ուստի մակրոտնտեսական կարգավորման առումով կարևորվում է մարդկային կապիտալի ազդեցության որոշումը ազգաբնակչության սպառողական վարքագծի, եկամուտների ձևավորման, նյութական բարիքների արտադրության և բաշխման, ծառայությունների ոլորտի զարգացման վրա: Այստեղից էլ բարձրագույն կրթության մակրոտնտեսագիտության առջև դրվում են մի շարք խնդիրներ.

- կրթության ոլորտում տնտեսական արդյունավետության ինչպիսի՞ չափանիշներ պետք է օգտագործվեն,
- ինչպիսի՞ սկզբունքներով պետք է գնահատվի մասնագիտական կրթության ծառայությունների ոլորտում ռեսուրսների ներգրավման արդյունավետությունը,

¹ Տե՛ս «Экономическая теория». М., 2000, էջ 352:


- ինչպիսի՞ն պետք է լինի պետության և արտաբյուջետային ֆինանսավորման հարաբերակցությունը կրթության ոլորտում,
- պետբյուջեից ի՞նչ չափաբաժիններով պետք է ֆինանսավորվեն մասնագիտական կրթական ծառայություններ մատուցող հաստատությունները և այդ ծառայությունները սպառողները:

Թվարկված խնդիրների լուծման ուղիները էապես փոխապայմանավորված են պետության հարկային, ֆինանսավարկային, ներդրումային, սոցիալական քաղաքականությամբ (տե՛ս գծապատկեր 1): Ընդ որում, այս ոլորտները միմյանց հակակշռելով, հավասարակշիռ վիճակ են ստեղծում կրթական շուկայում՝ ոլորտում ծախսված ռեսուրսները համապատասխանեցնելով ձևավորված մակրոտնտեսական իրավիճակի պահանջներին:

Այսպես, մասնագիտական կրթության ոլորտում կատարված ներդրումների արդյունավետությունը չպետք է գնահատել միայն կրթությանը առնչվող այնպիսի որակական ցուցանիշներով, ինչպիսիք են համախառն ներքին արդյունքում կրթական ծախսերի տեսակարար կշիռը, գիտության և կրթության ծախսերի տեսակարար կշիռը պետբյուջեի ծախսային մասում, մասնագետ շրջանավարտին բաժին ընկնող ուսումնական ծախսերի մեծությունը, աշխատունակ բնակչության կազմում բարձրագույն կրթությամբ մասնագետների տեսակարար կշիռը և այլն²: Կարևոր է նաև գործազրկության մակարդակի և բնակչության կրթական ծառայությունների սպառման ծավալների միջև կապի հստակ գնահատումը, հարկային քաղաքականության ազդեցության որոշումը ոչ միայն կրթական ծառայությունների առաջարկի, այլև պահանջարկի վրա:

Գծապատկեր 1

Կրթական շուկայի մակրոտնտեսական կարգավորման ոլորտները



Ներդրումները մասնագիտական կրթական ոլորտում ձևավորելով մարդկային կապիտալ՝ գտնվում են երկարաժամկետ տնտեսական փոխհատուցման գործընթացում: Ուստի մակրոտնտեսական հարթությունում

² Տե՛ս **Ս. Երիցյան, Ա. Ճուղուրյան**, Մասնագիտական կրթության մարտահրավերները. Բոլոնիայից Երևան, Եր., 2012, էջ 223:

գործող ներդրումային և ֆինանսավարկային լծակները ձգտում են ձևավորելու մի այնպիսի հավասարակշիռ իրավիճակ, երբ երկարաժամկետ հատվածում մասնագետի պատրաստման ծախսերը արդարացվում են ոչ միայն անհատի, այլև հանրային արդյունավետության տեսանկյունից:

Կրթական ծառայությունների մակրոտնտեսական կարգավորման մոդելում պետք է հաշվի առնվեն նաև բանկային տոկոսադրույքները, հարկային բեռը, գնաճը, ազգաբնակչության զբաղվածությունը, սպառման և խնայողության վարքագիծը, հանրային ռեսուրսների ներգրավման աստիճանը, որոնք, հակազդելով մեկը մյուսին, բարձրագույն կրթության շուկայում ստեղծում են հավասարակշիռ վիճակ:


Բարձրագույն մասնագիտական կրթության ֆինանսավորումը իրականացվում է երեք ձևով: Առաջին՝ կրթությունը ամբողջությամբ ֆինանսավորվում է պետությունից, և ուսանողը ընդհանրապես ազատվում է կրթավճարներից, ինչպես նաև՝ ուսումնառությանը առնչվող ծախսերից (վարձու բնակատեղիների, ինտերնետ սրահների, փորձարարական լաբորատորիաների վարձեր և այլն): Երկրորդ՝ մատուցվող մասնագիտական կրթական ծառայությունների ծախսերի փոխհատուցման բեռը ամբողջովին ընկնում է ուսանողի վրա: Երրորդ՝ մասնագիտական կրթական ծառայությունների ֆինանսավորումը կատարվում է «խառը» ձևով՝ հանրային և մասնավոր միջոցներով, ինչն առավել տարածում ունի մասնագիտական կրթական պրակտիկայում:

Յետևաբար, խնդիր է դրվում բացահայտելու մասնագիտական կրթության պետական և մասնավոր ֆինանսավորման չափաբաժինների օպտիմալ հարաբերակցությունը: Պետական բյուջեի հաշվին կրթության ֆինանսավորման պարագայում բնակչությունը մի կողմից սպառման ծախսերում կրճատում է կրթավճարների չափը, սակայն, մյուս կողմից, բախվում է հարկային բեռի ավելացման հիմնախնդրին՝ պայմանավորված աճող հանրային ծախսերի փոխհատուցումն ապահովող հարկային լրացուցիչ մուտքերով:

Եթե բարձրագույն մասնագիտական կրթությունը ամբողջովին ֆինանսավորվում է մասնավոր կրթավճարների հաշվին, ուսանողների շրջանում ուսումնառության տարիներին և անգամ դրանից որոշ ժամանակ անց, ձևավորվում է լարված սոցիալ-տնտեսական իրավիճակ: Դրանով իսկ կրթական շուկայում նվազում է մասնագիտական ուսումնառության գրավչության աստիճանը և բուհական ծառայությունների պահանջարկը: Չուզահեռաբար բարձրանում է աշխատանքի շուկայում բարձրագույն կրթությամբ մասնագետների պահանջարկը, որոնց պատրաստման համար պետությունը լրացուցիչ միջոցներ է ծախսում և, ի վերջո, հավասարակշռություն է հաստատվում մասնագետների առաջարկի ու պահանջարկի միջև: Յետևաբար, մակրոտնտեսական միջավայրում կարևորվում է կրթության ֆինանսավորման հանրային և մասնավոր չափաբաժինների գնահատումը հարկային քաղաքականության տեսանկյունից այնպես, որ ֆիսկալ գործիքներով ձևավորվի հարկային համաչափ բեռ և խրախուսվի մասնագիտական կրթության զարգացումը³:

³ Стен Гретченко А. И. Болонский процесс: интеграция России в европейское и мировое образовательное пространство // wikipedia.org/wiki/ Высшее_образование#.D0.9B

Կրթական ծախսերի վարքագիծը մասնավոր և պետական ֆինանսավորման պարագայում



Եթե մասնագիտական կրթությունը ամբողջովին ֆինանսավորվի հանրային միջոցներով, ապա կրթության պետական ֆինանսավորման աճի հետ մեկտեղ կավելանան նաև հարկային մուտքերը (տե՛ս գծապատկեր 2, G ուղիղ):

Հակառակ պարագայում, երբ մասնագիտական կրթությունը ամբողջովին ֆինանսավորվի մասնավոր հատվածի կողմից, ապա կրթական ծառայությունների մատուցման հսկայածավալ ռեսուրսներ չեն պահանջվի պետության կողմից, ուստի և այդ առումով կնվազի հարկային մուտքերի ավելացման պահանջարկը: Մասնավոր հատվածում կրթական ծախսերի կրճատման պարագայում մասնագիտական ուսուցման ծառայությունների մատուցման բեռը ընկնում է պետության վրա, և դրանով իսկ ավելանում է հարկային մուտքերի պահանջարկը (տե՛ս գծապատկեր 2, P ուղիղ): «Խառը» սկզբունքով, այսինքն՝ պետական և մասնավոր միջոցներով մասնագիտական կրթության ֆինանսավորման համար հասարակությունում ձևավորվում է a_0 մակարդակի հարկային բեռ: Դրանով հնարավորություն է ստեղծվում պետական միջոցների հաշվին փոխհատուցելու կրթական ծախսերի մի մասը, իսկ մյուս մասը ֆինանսավորելու մասնավոր հատվածի հաշվին՝ այդ շրջանակում չնվազեցնելով մասնագիտական կրթության գրավչությունը:


Ընդհանուր առմամբ, հասարակությունը պետք է ձգտի մասնագիտական կրթության ֆինանսավորման ծանրության կենտրոնը տեղափոխել պետական ոլորտ: Բնակչության սպառողական զամբյուղում մասնավոր հատվածի միջոցներով ավելացնելով կրթության ֆինանսավորումը, պետությունը որոշակիորեն կորցնում է ֆիսկալ խթանիչ քաղաքականության արդյունավետությունը: Մուծելով մեծ կրթավճարներ՝ բնակչությունը զրկվում է սոցիալական այլ ծախսերի իրականացման հնարավորություններից, որոնք ստիպված փոխհատուցվում են հանրային միջոցներով: Իսկ

դա ենթադրում է պետության կողմից լրացուցիչ հարկային մուտքերի հավաքագրում:

Կրթության ֆինանսավորման մասնավոր հատվածի ընդլայնման հետևանքով ֆիսկալ քաղաքականության արդյունավետության անկումը ներկայացնենք գծապատկեր 3-ի միջոցով:

Գծապատկեր 3

Ֆիսկալ քաղաքականությունը կրթության մասնավոր ֆինանսավորման աճի դեպքում



Գծապատկեր 3-ը ցույց է տալիս, որ բարձրագույն մասնագիտական կրթության ֆինանսավորման աճը՝ ի հաշիվ մասնավոր հատվածի (P_1), հանգեցնում է պետական միջոցներով ֆինանսավորման կրճատման (G_1): «Խառը» ֆինանսավորմամբ հավասարակշռման արդյունքում հարկային բեռի ավելացում է տեղի ունենում (a_0 -ից՝ a_1 կետ), և այն էլ առավել արագ տեմպերով, քան կրթական ծախսերի աճն է (Δb): Որքան ավելանում է կրթության ֆինանսավորման ծավալում մասնավոր հատվածի չափաբաժինը, այնքան մեծանում է հարկային բեռի և կրթական ծախսերի հավելաճի հարաբերակցությունը՝ $\Delta a / \Delta b > 1$: Ուստի հնարավորինս պետք է ձգտել բարձրագույն մասնագիտական կրթությունը ֆինանսավորելու պետական միջոցների հաշվին, դրանով իսկ նվազեցնելով $\Delta a / \Delta b$ հարաբերակցությունը՝ կրճատելով կրթության ֆինանսավորմանն ուղղված հարկային մուտքերը: Քանի որ բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների մատուցումը հսկայածավալ ռեսուրսներ է պահանջում, ուստի դրա կազմակերպումը զուտ հանրային միջոցներով հատուկ է տնտեսապես գերզարգացած պետություններին⁴:


Այսպիսով, կրթական շուկայում մակրոտնտեսագիտության խնդիրը «խառը» ֆինանսավորման այնպիսի չափաբաժնի որոշումն է, երբ $\Delta a / \Delta b$ հարաբերակցությունը ձգտի 1-ի: Այս դեպքում կրթական ծախսերի հավել-

⁴ Տե՛ս Lea, S. J., D. Stephenson, and J. Troy. Higher Education Students' Attitudes to Student Centred Learning: Beyond 'educational bulimia'. *Studies in Higher Education* 28(3), London, 2003, էջ 322:

լաճը ուղեկցվում է հարկային բեռի համարժեք հավելաճով: Իսկ երբ, կրթական ծախսերի ֆինանսավորման ծանրության կենտրոնը տեղափոխվում է պետական հատված, ապա դիտվում է հարկային բեռի միայն հարաբերական կրճատում: Այսինքն՝ a_0 -ն տեղափոխվում է a_1 կետ՝ ծախս ընթացքով (տե՛ս գծապատկեր 4)՝ միաժամանակ արձանագրելով $\Delta a / \Delta b$ հարաբերականության նվազում ($\Delta a / \Delta b < 1$): Դրանով իսկ մակրոտնտեսական կտրվածքով կրթական ծախսերի հավելաճը առաջանցիկ բնույթ է կրում դրանց ֆինանսավորման նպատակով ձևավորվող հարկային մուտքերի հավելաճից, որն էլ վկայում է կրթության ոլորտում արդյունավետ ֆիսկալ քաղաքականության վարման մասին:

Գծապատկեր 4

Ֆիսկալ քաղաքականությունը կրթության պետական ֆինանսավորման աճի դեպքում



Բոլոնիայի գործընթացի շրջանակում կայացած Լյուվենի կոնֆերանսում հստակ ընդգծվեց բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների ներկա փուլում կրթության նկատմամբ հանրային պատասխանատվության աստիճանի կարևորությունը: Դրանից ելնելով, պետական ֆինանսավորումը ներկայացվեց կարևորագույն գործոն՝ երաշխավորելու դիմորդների արդար մուտքը դեպի ինքնավար բարձրագույն ուսումնական հաստատություններ, և խթանելու մասնագիտական կրթության կայուն զարգացումը⁵:

Կրթության որակն ուղղակիորեն կախված է լիարժեք ֆինանսավորումից: Նոր ֆինանսական գործելակերպի մշակումը կարևոր գործոն է շուկայական պայմաններում հաջողակ լինելու համար: Պետության դրամական միջոցների ճիշտ օգտագործումը, լրացուցիչ ֆինանսական աղբյուրների ներգրավումը մեծ խթան կհանդիսանան կրթության համակարգի տնտեսական հարցերը կարգավորելու գործում⁶: Լրացուցիչ ֆինանսա-

⁵ Տե՛ս «Եվրոպական երկրների բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների կոնֆերանսի կոմյունիկե», կետ 22, Լյուվեն/Լուվեն-լա-Նյուվ, 28-29 ապրիլի, 2009:

⁶ Տե՛ս Ա. Ջարությունյան, Համեմատական մանկավարժություն, Եր., 2011, էջ 31:

կան աղբյուրների միջոցները կնպաստեն տարբեր տեսակի արտաբյուջե-տային ծառայությունների կազմակերպմանը, իսկ արտաբյուջետային ծառայություններ կազմակերպելու համար կներգրավվեն նոր ֆինանսական միջոցներ:

Կրթությունը կարելի է դիտել որպես հետաձգված հատույցով ներդրում: Հասարակության ներդրումները ներառում են պետական ծախսերը՝ դպրոցական ծառայությունների մատուցումը, կրթություն ստանալու հետ կապված այլ վճարները: Նույնիսկ այս ծախսերը ներառելուց հետո սոցիալական հատույցն ավելի բարձր է, սակայն սոցիալական հատույցի ի հայտ գալու համար պահանջվում են տարիներ: Այնուամենայնիվ, վերջին տարիներին ՀՀ պետբյուջեից կրթության ծախսերի ֆինանսավորման նվազում է նկատվում (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ պետական բյուջեում կրթության ծախսերի դինամիկան (մլն դրամ)⁷

Ցուցանիշներ	2008	2009	2010
Կրթություն	103530,8	107529.0	97790.1
Կրթական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2,9	3,4	2,8

Ներկայումս Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը: Հավասարապես մատչելի որակյալ կրթության ապահովման և կրթության ոլորտի արդյունավետության բարձրացման նպատակով երկրում իրականացվում են բարեփոխումների ծրագրեր: Ոլորտի զարգացման քաղաքականությունը համահունչ է ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի «Կրթություն՝ հանուն կայուն զարգացման» ռազմավարությանը և ուղղված է նրան, որ բարեփոխումների արդյունքները նշանակալի ազդեցություն ունենան երկրում տնտեսական աճի, աղքատության կրճատման, անհավասարությունը մեղմելու, բնապահպանական անվտանգությունն ապահովելու և մարդկային զարգացման գործընթացների վրա ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում:

Այսպիսով, մասնագիտական կրթական շուկայի մակրոտնտեսական կարգավորման խնդիրն է հանրային և մասնավոր ռեսուրսներով կրթության ֆինանսավորման օպտիմալացումը այնպես, որ ներդաշնակություն սահմանվի պետության կողմից վարվող սոցիալական, հարկային, ֆինանսավարկային քաղաքականությունների միջև: Իսկ դրա լուծման հիմնական ուղին մասնագիտական կրթության ծանրության կենտրոնի տեղափոխումն է մասնավորից դեպի պետական ոլորտ:

⁷ Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ԱԿԾ 2011, էջ 393-394:

АРМЕН ДЖУГУРЯН, НОННА ХАЧАТРЯН – *Задачи макроэкономического урегулирования рынка образования.* – В статье проанализировано, как оптимизировать финансирование образовательных услуг из государственных и внебюджетных средств. В частности, исходя из особенностей этого рынка, предлагается механизм смешанного финансирования профессионального образования. Государственное субсидирование не должно препятствовать нормальному функционированию рынка образовательных услуг – наоборот, способствовать равномерному развитию среднего и высшего профессионального образования.

ARMEN JUGHURYAN, NONNA KHACHATRYAN – *Makroeconomic Regulation Issues of Education Market.* – The article discusses optimization issues of education process financing from governmental and private sectors. Particularly, from the point of view of education service providing market peculiarities, "mixture financing" model of professional education service providing is suggested. It is also important, that governmental subsidizing should not make obstacles for normal functioning of education market and promote identical development of higher and specialized secondary education process.